

Մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային այց կատարեց Սևանի տարածաշրջան

06.07.2017

Հուլիսի 6 ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն աշխատանքային այց կատարեց Սևանի տարածաշրջան: Մարզպետի առաջին կանգառը Սևան քաղաքի Նորիկ Դագարյանի անվան մարզադպրոցն էր, որտեղ ընթանում էր ծանրամարտի մարզային առաջնությունը: Առաջնությանը մասնակցում էին Գավառ, Սևան, Մարտունի քաղաքների, ինչպես նաև Հայրավանք ու Վերին Գետաշեն համայնքների մարզադպրոցների սաները: Դիմելով մարզիկներին՝ մարզպետը նշեց, որ մարզի զարգացմանը զուգահեռ պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել մշակույթին և սպորտին, հավելելով, որ պետությունն այս ոլորտների զարգացման համար ունի համապատասխան ծրագրեր: Մարզպետը հույս հայտնեց, որ տարբեր մարզաձևերում Գեղարքունիքը ներկայացնող մարզիկները հանրապետական ու միջազգային տարբեր մրցաշարերում կշարունակեն մրցանակներ նվաճելու ավանդույթները:

Այնուհետ Սևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ աշխատանքային քննարկում տարածաշրջանի համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում մարզպետը ծանոթացավ կառավարության աջակցությամբ Սևանի տարածքի համայնքներում մեկնարկած ծրագրերի ընթացքին, ինչպես նաև՝ համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հիմնախնդիրներին եւ առաջարկություններին: «Ցանկացած հիմնախնդրի լուծման համար պատրաստ եմ աջակցել մարզպետի լիազորությունների և հնարավորությունների շրջանակներում: Կարծում եմ, որ համատեղ ուժերով կկարողանանք կարգավորել ծագած ցանկացած հիմնահարց, գտնել արագ ու արդյունավետ լուծումներ: Աշխատանքային օրվա ցանկացած ժամի ես հասանելի եմ լինելու բոլորի համար, հարկ եղած դեպքում նաև տեղում եմ ծանոթանալու հիմնախնդիրներին: Իմ այցելությունները համայնքներ կրելու եւ պարբերական եւ գործնական բնույթ»-նշեց մարզպետը :

Այցի շրջանակներում Կարեն Բոթոյանը եղավ նաև Սևան քաղաքում գործող «Բոհեմ» արվեստանոց-թեյրան սոցիալական ձեռնարկությունում, ծանոթացավ երիտասարդների նախաձեռնությամբ բացված կենտրոնի աշխատանքներին: Մարզպետը նշեց, որ Գեղարքունիքում արդյունավետ աշխատում են նմանատիպ ձեռնարկությունները: «Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ նման ձեռնարկություններում ստացվող շահույթի կեսից ավելին ուղղվում է համայնքում մշակութային կյանքի զարգացմանը»,-նշեց մարզպետ Կարեն Բոթոյանը: